Դատական Գործ N: ԵՔԴ/1127/02/08

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	10-11-2008
Հայցվոր/դիմող	
Անուն	Վարշամ
Ազգանուն	Ղարիբյան
Հասցե	ք.Երևան,Եղիազարյան փ.10տուն
Ներկայացուցիչ	
Անուն	Ազատ
Ազգանուն	Շահբազյան
Հասցե	ք.Երևան,Տիգրան Մեծի 4
Պատասխանող	
Անուն:	Շանթ Պլյուս ՍՊԸ
Հասցե:	ք.Երևան,Լենինականի 12
Քաղաքացիական գործի ստացման կարգը:	Առաջին անգամ
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	Ոչ
3-րդ անձ	
Անուն:	Էլիտ Շանթ ՍՊԸ
Հասցե:	ք.Երևան,Ա.Վշտունի 73
Պահանջ:	հեղինակային իրավունքների խախտումները վերացնելու
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	5.3
Պետական տուրք:	20000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը:	
Հակընդդեմ պահանջ:	
Պետական տուրք:	

Ամսաթիվ:	11-11-2008
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Երևանի քաղաքացիական
Դատավորի անուն:	Սամվել Եփրեմի Թադևոսյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Երևանի քաղաքացիական
Դատավորի անուն:	Սամվել Եփրեմի Թադևոսյան

Որոշման ամսաթիվ:	13-11-2008

Որոշման ամսաթիվը:	27-02-2009
Դատարան:	Աջափնյակ և Դավթաշեն
Որոշման բովանդակությունը:	Գործ ԵՔԴ 1127/02/08 Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԳՈՐԾԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԱՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ «27» փետրվարի 2009թ. ք.Երևան Երևանի քաղաքացիական դատարանի դատավոր Ս.Թադևոսյանիս վարույթում է գտնվում քաղաքացիական գործն ըստ հայցի Վարշամ Արամի Ղարիբյանի ընդդեմ «Շանթ Պլյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, վեճի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող 3-րդ անձ ՝ «Էլիտ Շանթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ հեղինակային իրավունքների շարունակական խախտումները վերացնելու, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու, և որպես անվավերության հետևանք՝ ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման գործողության երկարաձգումն անվավեր ճանաչելու, պատասխանողի կողմից ապրանքային նշանը կրող պատկերի օգտագործումն արգելելու, պատասխանողին ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն և ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջների մասին: Համաձայն ՀՀ Ազգային ժողովի կողմից 2009 թվականի փետրվարի 5-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-44-Ն) 15 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ 2009 թվականի մարտի 1-ից հետո քաղաքացիական դատարանների վարույթում գտնվող գործերը, տարածքային ընդդատությանը համապատասխան, փոխանցվում են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82 հոդվածի համաձայն՝ հայցը հարուցվում է պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարան: Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86 հոդվածի 3-րդ մասով և 144 հոդվածով Ո Ր Ո Շ Ե Ց Ի Թիվ ԵՔԴ 1127/02/08 քաղաքացիական գործն ըստ հայցի Վարշամ Արամի Ղարիբյանի ընդդեմ «Շանթ Պլյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, վեճի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող 3-րդ անձ ՝ «Էլիտ Շանթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ հեղինակային իրավունքների շարունակական խախտումները վերացնելու, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու, և որպես անվավերության հետևանք՝ ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման գործողության երկարաձգումն անվավեր ճանաչելու, պատասխանողի կողմից ապրանքային նշանը կրող պատկերի օգտագործումն արգելելու, պատասխանողին ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն և ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջի մասին փոխանցել Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

	Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ս. Թ Ա Դ Ե Վ Ո Ս Յ Ա Ն
Որոշման հիմքը	
Հոդված	ՀՕ-44-Ն
Ուղարկման ամսաթիվը:	
Էջերի քանակը:	
Գործին կից նյութերը:	
Գրության համարը:	

Դատական Գործ N: ԵՔԴ/1127/02/08

Ամսաթիվ:	05-03-2009
Ամսաթիվ:	12-03-2009
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Աջափնյակ և Դավթաշեն
Դատավորի անուն:	Անի Ռաֆիկի Մխիթարյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Աջափնյակ և Դավթաշեն
Դատավորի անուն:	
Որոշման ամսաթիվ:	13-03-2009
Դատաքննության ամսաթիվ:	14-04-2009
Դատաքննության ամսաթիվ:	30-04-2009
Դատաքննության ամսաթիվ:	27-05-2009
Դատաքննության ամսաթիվ:	26-06-2009
Դատաքննության ամսաթիվ:	07-07-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	17-03-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	14-04-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	11-05-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	29-05-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	26-06-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	
Դատաքննության ամսաթիվ:	10-07-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	07-07-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	10:45
Նիստերի դահլիճի համար:	3

Որոշման ամսաթիվը:	10-07-2009
Դատարան:	Վարչական
Որոշման բովանդակությունը:	Գործ թիվ ԵՔԴ /1127/02/08 Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին 10 հուլիսի 2009թ. քաղ. Երևան ՀՀ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանը, նախագահությամբ դատավոր Ա. Մխիթարյանի, քարտուղարությամբ Մ. Շարազյանի, մասնակցությամբ՝ հայցվորի և վեճի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Մարտիրոսյանի, պատասխանող «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Ալումյանի, պատասխանող «Մավա Իմպուլս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ն. Գալստյանի, երրորդ անձ ՀՀ մտավոր սեփականության գործակալության ներկայացուցիչ Ա. Աբգարյանի, դռնբաց դատական նիստում, դատարանում, քննարկելով ըստ հայցի Վարշամ Արամի Ղարիբյանի, վեճի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ի ընդդեմ «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի, «Մավա Իմպուլս» ՍՊԸ-ի և «Արմսվիթ» ՍՊԸ-ի, ներգրավմամբ երրորդ անձ ՀՀ մտավոր սեփականության գործակալության՝ «հեղինակային իրավունքը ճանաչելու, հեղինակային իրավունքների շարունակական խախտումները վերացնելու, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու և որպես անվավերության հետևանք՝ ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման գործողության երկարաձգումն անվավեր ճանաչելու, պատասխանողի կողմից ապրանքային նշանը կրող պատկերի օգտագործումն արգելելու, պատասխանողին ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն և ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջի մասին» թիվ ԵՔԴ /1127/02/08 քա¬ղա¬քա¬¬ցիա¬կան գործը Պ Ա Ր Զ Ե Ց Վարշամ Արամի Ղարիբյանի ներկայացուցիչ Ա. Մարտիրոսյանը, դատաքննության նախապատրաստական փուլում փոխել է հայցի հիմքը և առարկան՝ խնդրելով «1.Ճանաչել Հայաստանի Հանրապետության արտոնագրային վարչության կողմից 12.10.1999թ.-ին «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ գրանցված «Շանթ» ապրանքային նշանի պատկերի նկատմամբ հայցվոր Վարշամ Ղարիբյանի հեղինակային իրավունքը. 2. Վերացնել հայցվոր Վարշամ Ղարիբյանի հեղինակային բացառիկ իրավունքների շարունակական խախտումները պատասխանող «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի կողմից, վերականգնելով մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցող վիճակը, այն է՝ որպես հետևանք՝ 2.1 վերացնել Հայաստանի Հանրապետության արտոնագրային վարչության կողմից 12.10.1999թ.-ին «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 գրանցումը և ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից պատասխանող «Շանթ Պլյուս» ապրանքային /սպասարկման/ նշանի գործողության երկարաձգման /մինչև՝ 22.02.2019թ./ գրանցումը, կատարված՝ 10.09.2008թ.-ին. 2.2 Արգելել «Շանթ Պլյուս», «ԱրմՍվիթ» և «Մավա Իմպուլս» ՍՊ ընկերությունների կողմից «Շանթ» ապրանքային նշանի պատկերի օգտագործումը. 2.3 Պարտավորեցնել «Շանթ Պլյուս», «ԱրմՍվիթ» և «Մավա Իմպուլս» ՍՊ ընկերություններին

	ոչնչացնել ընկերություններում պահվող «Շանթ» ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը. 2.4 Պարտավորեցնել «Շանթ Պլյուս», «ԱրմՍվիթ» և «Մավա Իմպուլս» ՍՊ ընկերություններին դուրս բերել շրջանառությունից «Շանթ» ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը»: Երրորդ անձ ՀՀ մտավոր սեփականության գործակալության ներկայացուցիչ Ա. Աբգարյանը 07.07.2009թ. միջնորդություն է ներկայացրել դատարան՝ խնդրելով սույն քաղաքացիական գործն ուղարկել ըստ առարկայական ընդդատության ՀՀ վարչական դատարան: Դատարանը, քննարկելով երրորդ անձ ՀՀ մտավոր սեփականության գործակալության ներկայացուցիչ Ա. Աբգարյանի կողմից ներկայացված միջնորդությունը, գտնում է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ. Թեև հայցվորը խնդրում է վերացնել հայցվոր Վարշամ Ղարիբյանի հեղինակային բացառիկ իրավունքների շարունակական խախտումները պատասխանող «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի կողմից, վերականգնելով մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցող վիճակը, իսկ Հայաստանի Հանրապետության արտոնագրային վարչության կողմից 12.10.1999թ.-ին «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 գրանցումը և ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից պատասխանող «Շանթ Պլյուս» ապրանքային /սպասարկման/ նշանի գործողության երկարաձգման /մինչև՝ 22.02.2019թ./ գրանցումը, կատարված՝ 10.09.2008թ.-ին, վերացնելու պահանջը դիտարկում է որպես հեղինակային իրավունքների շարունակական խախտումների հետևանք, այնուհանդերձ, դատարան արձանագրում է, որ հայցվորի պահանջը՝ Վարշամ Ղարիբյանի հեղինակային բացառիկ իրավունքների շարունակական խախտումները պատասխանող «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի կողմից վերացնելու մասին ածանցվում է Հայաստանի Հանրապետության արտոնագրային վարչության կողմից 12.10.1999թ.-ին «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 գրանցումը և ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից պատասխանող «Շանթ Պլյուս» ապրանքային /սպասարկման/ նշանի գործողության երկարաձգման /մինչև՝ 22.02.2019թ./ գրանցումը, կատարված՝ 10.09.2008թ.-ին, վերացնելու պահանջից: Տվյալ պարագայում հայցվորի՝ Հայաստանի Հանրապետության արտոնագրային վարչության կողմից 12.10.1999թ.-ին «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 գրանցումը և ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից պատասխանող «Շանթ Պլյուս» ապրանքային /սպասարկման/ նշանի գործողության երկարաձգման /մինչև՝ 22.02.2019թ./ գրանցումը, կատարված՝ 10.09.2008թ.-ին, վերացնելու պահանջը, համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, այն է՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ընդդատյա է ՀՀ վարչական դատարանին: Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումը՝ արտահայտված 03.02.2009թ. որոշմամբ՝ քաղաքացի Սուսաննա Հովսեփյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8 հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ, այն է՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով սահմանված սահմանադրական դրույթում «իր խախտված իրավունքները վերականգնելու» և «իր գործի» ձևակերպումների համադրված վերլուծությունը վկայում է, որ «իր գործի քննություն» հասկացությունը ներառում է բոլոր այն փոխկապակցված հայցապահանջների համակցված քննությունը, որոնք նպատակաուղղված են մեկ ընդհանուր խնդրի լուծմանը, այն է՝ այդ գործի շրջանակներում անձի խախտած իրավունքի վերականգնմանը, դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական

գործն ընդդատյա է ՀՀ վարչական դատարանին և վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննության՝ եթե գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ:
Հետևաբար, նման պայմաններում, գործը պետք է հանձնել ըստ ընդդատության՝ ՀՀ վարչական դատարանի քննությանը:
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր. 82, 86 և 144 հոդվածներով[a]

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել երրորդ անձ ՀՀ մտավոր սեփականության գործակալության ներկայացուցչի կողմից ներկայացված միջնորդությունը:
Թիվ ԵՔԴ /1127/02/08 քաղաքացիական գործն ըստ հայցի Վարշամ Արամի Ղարիբյանի, վեճի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ի ընդդեմ «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի, «Մավա Իմպուլս» ՍՊԸ-ի և «Արմսվիթ» ՍՊԸ-ի, ներգրավմամբ երրորդ անձ ՀՀ մտավոր սեփականության գործակալության՝ «հեղինակային իրավունքը ճանաչելու, հեղինակային իրավունքների շարունակական խախտումները վերացնելու, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու և որպես անվավերության հետևանք՝ ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման գործողության երկարաձգումն անվավեր ճանաչելու, պատասխանողի կողմից ապրանքային նշանը կրող պատկերի օգտագործումն արգելելու, պատասխանողին ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն և ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջի մասին» հանել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի վարույթից և հանձնել ՀՀ վարչական դատարանի քննությանը:
Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Որոշման հիմքը	
Հոդված	86 Մաս 2 Կետ 1
Ուղարկման ամսաթիվը:	22-07-2009
էջերի քանակը:	348
Գործին կից նյութերը:	
Գրության համարը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	25-11-2009
Ամսաթիվ:	26-11-2009
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Աջափնյակ և Դավթաշեն

Դատավորի անուն:	Մարգարիտա Հարթենյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Աջափնյակ և Դավթաշեն
Դատավորի անուն:	
Որոշման ամսաթիվ:	27-11-2009
Դատաքննության ամսաթիվ:	27-01-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	27-11-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	16:00
Նիստերի դահլիճի համար:	4
Դատաքննության ամսաթիվ:	02-03-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	27-01-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	14:30
Նիստերի դահլիճի համար:	4
Դատաքննության ամսաթիվ:	12-04-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	02-03-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	16:00
Նիստերի դահլիճի համար:	4
Դատաքննության ամսաթիվ:	19-05-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	12-04-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	15:30
Նիստերի դահլիճի համար:	4
Դատաքննության ամսաթիվ:	30-06-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	19-05-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	15:30
Նիստերի դահլիճի համար:	4
Դատաքննության ամսաթիվ:	13-10-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	09-09-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	09:20
Նիստերի դահլիճի համար:	4

Ամսաթիվ:	27-10-2010
Հոդված	
Հոդված	ՀՀ քաղ. դատ. օր. 32-րդ Մաս 1-ին
Հոդված	
Հոդված	ՀՀ քաղ. դատ. օր. 109-րդ
Հոդված	
Հոդված	ՀՀ քաղ. դատ. օր. 110-րդ
Կարճման հիմքը:	Հայցվորը հրաժարվել է հայցից

Դատական ակտ (վճիռ, որոշում):

Գործ թիվ ԵՔԴ/1127/02/08
Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

27.10.2010թ. ք.Երևան

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը

նախագահությամբ դատավոր՝ Մարգարիտա Հարթենյանի
քարտուղարությամբ՝ Սոնա Ղազարյանի

մասնակցությամբ
հայցվորի և երրորդ անձ «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հակոբ Սաֆարյանի /անձնագիր. AK 0314214, տրված՝ 08.06.2009 թվականին 009-ի կողմից/

պատասխանող «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հայկ Ալումյանի /արտոնագիր. թիվ 284/

պատասխանողներ «Մավա Իմպուլս» ՍՊԸ-ի և «Արմսվիթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Բագրատ Վարդանյանի /անձնագիր. AF 0294004, տրված՝ 17.04.2001 թվականին 005-ի կողմից/

երրորդ անձ ՀՀ մտավոր սեփականության գործակալության ներկայացուցիչ՝ Արա Աբգարյանի

երրորդ անձ «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հայկ Օսեփյանի /անձնագիր. AE 0530229, տրված՝ 17.12.1999 թվականին 004-ի կողմից/

դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Վարշամ Ղարիբյանի /անձնագիր. AH 0511087, տրված՝ 27.11.2007 թվականին 012-ի կողմից/ ընդդեմ «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի /գրանցման վկայական 01 Ա 008956, ՀՎՀՀ 01201199/, «Մավա Իմպուլս» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ 01224511/, «Արմսվիթ» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ 01241106/, երրորդ անձինք ՀՀ մտավոր սեփականության գործակալության, «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ի /գրանցման վկայական 03 Ա 079364, ՀՎՀՀ 01241801/՝ հեղինակության իրավունքը ճանաչելու, հեղինակային իրավունքների շարունակական խախտումները

վերացնելու, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու, պատասխանողների կողմից ապրանքային նշանը կրող պատկերի օգտագործումն արգելելու, պատասխանողներին ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն և ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

Դատավարական նախապատմությունը.
Վարշամ Ղարիբյանը հայցադիմում է ներկայացրել Երևանի քաղաքացիական դատարան ընդդեմ «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի, երրորդ անձ «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ի՝ հեղինակային իրավունքների շարունակական խախտումները վերացնելու, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու, և որպես անվավերության հետևանք՝ ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման գործողության երկարաձգումն անվավեր ճանաչելու, պատասխանողի կողմից ապրանքային նշանը կրող պատկերի օգտագործումն արգելելու, պատասխանողին ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն և ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջների մասին:
Երևանի քաղաքացիական դատարանը /դատավոր Ս.Թադևոսյան/ 13.11.2008 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունել է վարույթ:
Երևանի քաղաքացիական դատարանը /նախագահող դատավոր Ս.Թադևոսյան/ գործը տարածքային ընդդատությանը համապատասխան առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին 27.02.2009 թվականի որոշմամբ թիվ ԵՔԴ/1127/02/08 քաղաքացիական գործը փոխանցել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:
Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանը /նախագահող դատավոր Ա.Մխիթարյան/ 13.03.2009 թվականի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունել է վարույթ:
Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանը /նախագահող դատավոր Ա.Մխիթարյան/ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին 10.07.2009 թվականի որոշմամբ թիվ ԵՔԴ/1127/02/08 քաղաքացիական գործը հանձնել է ՀՀ վարչական դատարանի քննությանը:
ՀՀ վարչական դատարանը /նախագահող դատավոր Ռ.Հակոբյան/ 31.07.2009 թվականի որոշմամբ թիվ ԵՔԴ/1127/02/08 վարչական գործն ընդունել է վարույթ:
ՀՀ վարչական դատարանը /նախագահող դատավոր Ռ.Հակոբյան/, քննելով վարչական գործն ըստ հայցի Վարշամ Ղարիբյանի ընդդեմ «Շանթ Պլյուս», «Մավա Իմպուլս», «Արմսվիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, երրորդ անձինք ՀՀ մտավոր սեփականության գործակալության, «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ի՝ հեղինակային իրավունքը ճանաչելու, հեղինակային իրավունքների շարունակական խախտումները վերացնելու, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու և որպես անվավերության հետևանք ՀՀ արտոնագրային վարչության 12.10.1999 թվականի «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 և ՀՀ մտավոր սեփականության գործակալության 10.09.2008 թվականի «Շանթ» ապրանքային /սպասարկման/ նշանի գործողության երկարաձգման գրանցումները վերացնելու, պատասխանողի կողմից ապրանքային նշանը կրող պատկերի օգտագործումն արգելելու, պատասխանողին ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը

ոչնչացնելուն և ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջների մասին, 21.10.2009 թվականին կայացրել է վճիռ և վճռել է. «Վարշամ Ղարիբյանի հայցով ընդդեմ «Շանթ Պլյուս», «Մավա Իմպուլս», «Արմսվիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, երրորդ անձինք ՀՀ մտավոր սեփականության գործակալություն, «Էլիտ Շանթ» ՍՊԸ՝ հեղինակային իրավունքը ճանաչելու, հեղինակային իրավունքների շարունակական խախտումները վերացնելու, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու և որպես անվավերության հետևանք՝ ՀՀ արտոնագրային վարչության 12.10.1999 թվականի «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 և ՀՀ մտավոր սեփականության գործակալության 10.09.2008 թվականի «Շանթ» ապրանքային /սպասարկման/ նշանի գործողության երկարաձգման գրանցումները վերացնելու, պատասխանողի կողմից ապրանքային նշանը կրող պատկերի օգտագործումն արգելելու, պատասխանողին ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն և ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջների մասին, սույն վարչական գործի վարույթը ՀՀ արտոնագրային վարչության 12.10.1999 թվականի «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 և ՀՀ մտավոր սեփականության գործակալության 10.09.2008 թվականի «Շանթ» ապրանքային /սպասարկման/ նշանի գործողության երկարաձգման գրանցումները վերացնելու պահանջի մասով, կարճել»:
ՀՀ վարչական դատարանը /նախագահող դատավոր Ռ.Հակոբյան/, հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածը, ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածը, գործն ըստ ընդդատության հանձնելու մասին 21.10.2009 թվականի որոշմամբ թիվ ԵՔՂ/1127/02/08 քաղաքացիական գործը հանձնել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարան:
Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը քաղաքացիական գործը վարույթ է ընդունել 27.11.2009 թվականին:

Հայցվորի դիրքորոշումը.
Հայցվորը, դիմելով դատարան, հայտնել է, որ սկսած 1994 թվականից ստեղծել է պաղպաղակի տեսակների էսքիզների, փաթեթավորումների ծավալային պատկերների և անվանումների մի շարք նմուշներ, որոնց վրա զետեղել է իր կողմից ստեղծած «Շանթ» ապրանքային նշանի պատկերը, որով ցանկացել է իր ապրանքները տարբերել շուկայում առկա այլ անձանց կողմից արտադրված նույնատիպ ապրանքներից:
Նշել է, որ համաձայն Հեղինակային իրավունքների ազգային գործակալության կողմից 22.07.1997 թվականին տրված թիվ 00172 վկայականի՝ հաստատվել է, որ վերոնշյալ գործակալությունում գրանցվել է հեղինակային իրավունքի հետևյալ օբյեկտը՝ «Դեկորատիվ կիրառական արվեստի երկ» /Պաղպաղակների տեսակներ և անվանումներ (թվով 52), ինչպես նաև՝ մի շարք «Դիզայնի երկեր»:
Մտավոր սեփականության գործակալության կողմից պատասխանող «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ին տրամադրվել է թիվ 4756 ապրանքային նշանի գրանցման վկայագիրը, որը գրանցվել է պետական գրանցամատյանում 12.10.1999 թվականին, գործողության ժամկետը՝ մինչև 22.02.2009 թվականը: Նշված ապրանքանիշը հանդիսացել է հայցվորին հեղինակային իրավունքով պատկանող «Դեկորատիվ կիրառական արվեստի երկի», ինչպես նաև՝ մի շարք «Դիզայնի երկերի» անբաժանելի մասը:
Դատարանին հայտնել է, որ «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ը դադարեցրել է իր

գործունեությունը 13.05.2008 թվականին: 13.05.2008 թվականին դադարեցնելով իր գործունեությունը՝ «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ը դիմել Մտավոր սեփականության գործակալություն՝ խնդրելով երկարաձգել ապրանքային նշանի գրանցման գործողությունը: 10.09.2008 թվականին ապրանքային նշանի գործողությունն երկարաձգվել է մինչև 22.02.2019 թվականը:
Գտնում է, որ 10.09.2008 թվականին «Շանթ» ապրանքային նշանի գործողությունը երկարաձգվել է օրենքի խախտումով:
Դատարանին հայտնել է, որ պարենային և ոչ պարենային ապրանքների առևտուր, ինչպես նաև պաղպաղակի և դրա համար նախատեսված վաֆլուց պատրաստված բաժակների արտադրություն և վաճառք կազմակերպելու նպատակով դեռ 1980-ական թվականների վերջերից ստեղծել և տնօրինել է «Ջյունիկ» կոոպերատիվը, որը լուծարվել է 1995 թվականին:
Նշել է, որ պաղպաղակի արտադրության ծավալների մեծացման և գործող օրենքի պահանջներին համապատասխան 23.02.1995 թվականին ստեղծել է և գրանցել է «Շանթ» լիակատար տնտեսական ընկերակցությունը, որի վերաբերյալ նրան տրամադրվել է թիվ 01Ա-008956 վկայականը:
Դատարանին հայտնել է, որ «Դեկորատիվ կիրառական արվեստի երկի», ինչպես նաև՝ «Դիզայնի երկերի» հեղինակային բոլոր իրավունքները պատկանում եմ բացառապես իրեն: Հեղինակային իրավունքի վերոնշյալ բոլոր օբյեկտներն ունեն մեկ հատկանշական տարր՝ անկախ դիզայնի առանձնահատկություններից դրանց բոլորի վրա զետեղվել է «Շանթ» ապրանքային նշանի պատկերը, որով ինքը ցանկացել է իր ապրանքները տարբերել այլ անձանց կողմից արտադրված նույնատիպ ապրանքներից:
Նշել է, որ վերակազմակերպման և անվանափոխության գործընթացի արդյունքում «Շանթ» լիակատար տնտեսական ընկերակցությունը վերածվել է «Շանթ Պլյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության: Ինքը չի առարկել, որպեսզի «Շանթ» ապրանքանիշն օգտագործվի ընկերության կողմից, քանի որ կարծել է, որ ընկերության մասնակից-սեփականատերն է և ընկերությունից շահույթ է ստանում:
«Էլիտ Շանթ» ՍՊԸ-ը հիմնադրվել է իր կողմից և իր գործունեությունը սկսել է 02.06.2008 թվականից: Իրեն հեղինակային իրավունքով պատկանող ստեղծագործությունները պայմանագրային հիմունքներով տրամադրվել են «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ի օգտագործմանը:
Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1102-րդ, 1103-րդ, 1104-րդ, 1111-րդ, 1124-րդ հոդվածները, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 13-րդ հոդվածները՝ նշել է, որ ստեղծագործությունը հեղինակի ստեղծագործ գործունեության հետևանքով մարդկային զգացմունքների ընկալման համար կոնկրետ ձևով արտահայտված և վերարտադրության հնարավորություն տվող գաղափարների, մտքերի, կերպարների ամբողջություն է: Այն ոչ նյութական բարիք է, մարդկանց հոգևոր գործունեության արդյունք, մարդու մտավոր գործունեության ոչ նյութական արդյունք: Այլ կերպ ասած՝ ստեղծագործություն է համարվում ոչ թե ստեղծված նյութական արդյունքը, այլ դրանում մարմնավորված ստեղծագործական միտքը:
Նշել է, որ մտավոր գործունեության արդյունքները, ի տարբերություն իրային առարկաների, մտավոր, ստեղծագործական աշխատանքի արդյունք են, որոնք պատկերային, տառային, թվային, ձայնային միջոցներով, այլ նշանների, խորհրդանիշերի տեսքով կարող են ամրագրվել որոշակի նյութական կրիչների վրա: Նյութական կրիչներն առարկաներ են, որոնց վրա արտացոլվելով, ոչ նյութական ստեղծագործությունն օբյեկտիվորեն ընկալելի, շոշափելի ձև է ստանում, դրա հետևանքով մտավոր գործունեության օբյեկտը դառնում է հեղինակային իրավունքի օբյեկտ, իսկ ստեղծագործության հեղինակը դրա նկատմամբ ձեռք է բերում

	բացառիկ իրավունքներ, այդ թվում՝ նաև անձնական գույքային: Գտնում է, որ սույն վեճի առարկան բուն ստեղծագործության նկատմամբ իր մտավոր սեփականության, այսինքն՝ հեղինակային իրավունքներն են, որոնք խախտվել են պատասխանողի կողմից, քանի որ վերոնշյալ ստեղծագործությունների անբաժանելի տարրը կազմող «Շանթ» ապրանքային նշանի պատկերը, առանց իր համաձայնության, դրվել է տնտեսական շրջանառության մեջ, որով խախտվել են իր բացառիկ անձնական ոչ գույքային և անձնական գույքային իրավունքները: Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ կետը՝ նշել է, որ մտավոր սեփականության գործակալության կողմից պատասխանող «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ին ապրանքային նշանի գրանցման գործողության երկարաձգում տրամադրելիս պետք է հաշվի առնվեին «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի, «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» դրույթները: Վկայակոչելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 1-ին, 5-րդ, 12-րդ հոդվածները, «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» 15-րդ, 92-րդ կետերը՝ նշել է, որ նշանը համարվում է այլ նշանին շփոթելու աստիճանի նման, եթե այն ընդհանուր առմամբ զուգորդվում է դրա հետ՝ չնայած առանձին տարբերությունների առկայությանը: Նշել է, որ առանց իր հեղինակային իրավունքը հանդիսացող «Շանթ» ապրանքային նշանի պատկերի օգտագործման թույլտվության, պատասխանողն իրավունք չուներ «Շանթ» ապրանքային նշանը գրանցելու, առավել ևս գրանցման գործողության ժամկետը երկարացնելու, ուստի գտնում է, որ պետք է վերացնել «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ին տրամադրված թիվ 4756 ապրանքային նշանի գրանցման գործողության երկարաձգումը՝ կատարված 10.09.2008 թվականին: Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 87-րդ, 88-րդ, 93-րդ հոդվածները՝ դատարանին խնդրել է վերացնել Վարշամ Ղարիբյանի հեղինակային իրավունքների շարունակական խախտումները պատասխանող «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի կողմից՝ վերականգնելով մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը և որպես հետևանք վերացնել ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից պատասխանող «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ին տրամադրված թիվ 4756 ապրանքային նշանի գրանցման գործողության երկարաձգումը՝ կատարված 10.09.2008 թվականին, արգելել «Շանթ» ապրանքային նշանը կրող պատկերի օգտագործումը «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ին և նրա կողմից տրված թույլտվության հիման վրա այլ ընկերությունների օգտագործումը, պարտավորեցնել «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ին ոչնչացնել ընկերությունում պահվող «Շանթ» ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը, պարտավորեցնել «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ին դուրս բերել շրջանառությունից «Շանթ» ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը: 07.07.2009 թվականին հայցվոր Վարշամ Ղարիբյանի ներկայացուցիչներ Ազատ Շահբազյանը և Արթուր Մարտիրոսյանը հայցի հիմքը և առարկան փոխելու վերաբերյալ միջնորդություն են ներկայացրել դատարան, որով հայտնել են, որ Վարշամ Ղարիբյանը 2006-2008 թվականներն ընկած ժամանակահատվածում «Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպությունում ի պահ է հանձնել կոնֆետների և պաղպաղակի փաթեթային դիզայնի մի շարք ստեղծագործություններ: «Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության կողմից տրված գրությունների համաձայն Վարշամ Ղարիբյանը նշված կազմակերպությանն ի պահ

է հանձնել հետևյալ ստեղծագործությունները՝
ա/ «ԿՈՆՖԵՏՆԵՐ» փաթեթի դիզայն,
բ/ «SHANT» ապրանքային նշանի դիզայն,
գ/ «ՄԱԵՍՏՐՈ», «ԲՈՒՐԱՏԻՆՈ», «ԱՄԱՐԵՏՏՈ», «ԿԻՏՐՈՆ», «ԶՈՎՔ», «ԾԻԱԾԱՆ», «ՍԿՅՈՒՌԻԿ» պաղպաղակների փաթեթների դիզայն:
Նշել են, որ «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ Արտոնագրային վարչության կողմից գրանցված «Շանթ» ապրանքային նշանի պատկերն իր բոլոր հատկանիշներով ամբողջովին նույնական է, արտատպված է, արտանկարված է Վարշամ Ղարիբյանի կողմից ավելի վաղ ստեղծված «Դեկորատիվ կիրառական արվեստի երկի», «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ» /թվով 52/, «Դիզայնի երկեր» ստեղծագործությունների, ինչպես նաև վերոնշյալ հեղինակային իրավունքի բոլոր օբյեկտների, այդ թվում՝ Վարշամ Ղարիբյանի կողմից ստեղծված պաղպաղակի էսքիզների, փաթեթավորումների ծավալային պատկերների վրա, անկախ անվանումներից զետեղված «Շանթ» ապրանքային նշանի պատկերից, որը նշված ստեղծագործությունների հետ մեկտեղ պաշտպանվում են հեղինակային իրավունքի վերաբերյալ օրենսդրությամբ և հանդիսանում են նշված բոլոր ստեղծագործությունների անբաժանելի մասը:
Դատարանին հայտնել են, որ «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի կողմից «Շանթ» ապրանքային նշանի պատկերի օգտագործումը տրամադրվել է պատասխանողներ «Մավա Իմպուլս» և «ԱՐՄՍՎԻԹ» ՍՊԸ-ներին:
Գտնում են, որ Արտոնագրային վարչության պետական գրանցամատյանում 12.10.1999 թվականին «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի նկատմամբ պետք է ճանաչվի հայցվոր Վարշամ Ղարիբյանի հեղինակության իրավունքը, բացի այդ պետք է վերացնել Վարշամ Ղարիբյանի հեղինակային բացառիկ իրավունքների շարունակական խախտումները, պետք է վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցող իրավիճակը հետևյալ պատճառաբանությամբ.
Վկայակոչելով տվյալ ժամանակահատվածում գործող 1996 թվականի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը, 5-րդ հոդվածը, 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ նշել են, որ մտավոր գործունեության արդյունքները, ի տարբերություն իրային առարկաների, մտավոր ստեղծագործական աշխատանքի արդյունք են, որոնք պատկերային, տառային, թվային, ձայնային միջոցներով այլ նշանների, խորհրդանիշերի տեսքով կարող են ամրագրվել որոշակի նյութական կրիչների վրա: Նյութական կրիչներներն առարկաներ են, որոնց վրա արտացոլվելով ոչ նյութական ստեղծագործությունն օբյեկտիվորեն ընկալելի, շոշափելի ձև է ստանում, դրա հետևանքով միայն մտավոր գործունեության օբյեկտը դառնում է հեղինակային իրավունքի օբյեկտ:
Վկայակոչելով 1996 թվականի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը՝ նշել են, որ սույն գործով վեճի առարկան բուն ստեղծագործության նկատմամբ հայցվորի մտավոր սեփականության, այսինքն՝ հեղինակային իրավունքներն են, որոնք խախտվել են պատասխանող ընկերության և գործակալության կողմից, քանի որ վերոնշյալ ստեղծագործությունների անբաժանելի տարրը կազմող «Շանթ» ապրանքային նշանի պատկերն առանց հայցվորի համաձայնության նախ գրանցվել է, այնուհետև՝ դրվել է տնտեսական շրջանառության մեջ, որով փաստորեն խախտվել են Վարշամ Ղարիբյանի նաև բացառիկ անձնական ոչ գույքային և անձնական գույքային իրավունքները, մասնավորապես՝ սպիտակ, կարմիր և կապույտ գունային համակցության գործածմամբ:
Նշել են, որ Վարշամ Ղարիբյանն անկախ պատրաստի ապրանքի փաթեթավորման եղանակից, սպառողին ցանկացել է ներկայացնել ապրանքի և փաթեթավորման հանդեպ իր հեղինակության յուրովի դրսևորումը, սպառողի մտքում և տեսողական դաշտում

	աներկբայելի կերպով դաջելով «Շանթ» պատկերը՝ իբրև իր հեղինակային բացառիկ իրավունքի նշում և արտացոլում: Գտնում են, որ Վարշամ Ղարիբյանի մտքում ծագած, այնուհետև համապատասխան կրիչի վրա արտացոլված ստեղծագործությունը, տվյալ պարագայում՝ «Դեկորատիվ կիրառական արվեստի երկ», «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ» /թվով 52/, «Դիզայնի երկեր» ստեղծագործությունների, ինչպես նաև հայցադիմումում նշված մյուս բոլոր օբյեկտների մասը կազմող «Շանթ» ապրանքանշանի պատկերը չէր կարող առաջանալ որևէ այլ անձի մտքում կամ երևակայության մեջ: Վկայակոչելով 1996 թվականի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը՝ նշել են, որ ստեղծագործության նկատմամբ բացառիկ գույքային իրավունքներն ապահովում են հեղինակի նյութական շահերը՝ տալով հեղինակին բացառիկ իրավունք՝ թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործության կամ դրա օրինակների օգտագործումը: Հեղինակը բացառիկ իրավունք ունի օգտագործելու իր ստեղծագործությունը ցանկացած ձևով և եղանակով, ինչպես նաև երրորդ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը: Վկայակոչելով 1996 թվականի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 27-րդ, 42-րդ, 43-րդ, 2006 թվականի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 11-րդ, 12-րդ, 65-րդ հոդվածները, 72-րդ հոդվածի 1-ին մասը, 1997 թվականի «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը՝ նշել են, որ «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի գրանցման որոշումը, ինչպես նաև Մտավոր սեփականության գործակալության կողմից 10.09.2008 թվականին «Շանթ» ապրանքային նշանի գրանցման գործողությունը երկարաձգելու որոշումը կայացվել է Վարշամ Ղարիբյանի հեղինակային իրավունքի վերոնշյալ օրենքով երաշխավորված իրավունքների խախտմամբ: Մասնավորապես գտնում են, որ խախտվել են 1996 թվականի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 8-րդ, 11-րդ, 12-րդ, 27-րդ, 42-րդ, 43-րդ հոդվածները, 2006 թվականի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 11-րդ, 12-րդ, 65-րդ հոդվածները: Վկայակոչելով 1997 թվականի «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը՝ նշել են, որ հայցվոր Վարշամ Ղարիբյանը համապատասխան մարմնում իր ստեղծագործությունների նկատմամբ գրանցելով իր բացառիկ հեղինակային իրավունքները, սակայն նախկինում գործող օրենսդրության համաձայն հնարավորություն չի ունեցել նշված «Շանթ» պատկերի նկատմամբ գրանցել իր սեփականության իրավունքը: Վկայակոչելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» թիվ ՀՕ-41 2000 թվականի օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-139-Ն օրենքի 3-րդ հոդվածը՝ նշել են, որ միայն 2007 թվականին «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» թիվ ՀՕ-41 2000 թվականի օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-159-Ն օրենքի 1-ին հոդվածով սահմանված փոփոխությունների համաձայն հայցվորը որպես ֆիզիկականն անձ իրավունք է ձեռք բերել որպես հեղինակ իր անվամբ գրանցելու «Շանթ» ապրանքանշանի պատկերը: Սակայն 20.05.2007 թվականին պատասխանող ընկերության անվամբ գործակալության կողմից արդեն իսկ գրանցված է եղել սեփականության իրավունքը, որի կապակցությամբ հայցվորը չի առարկել, քանի որ մի կողմից հանդիսացել է նշված ընկերության հիմնադիր-մասնակիցը, մյուս կողմից՝ ապրաքանշանի գրանցման ժամկետը մոտենում էր իր

	ավարտին: Տեղեկանալով, որ «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ը 13.05.2008 թվականից դադարեցրել է իր գործունեությունը, այնուհետև գործունեությունը դադարեցնելուց հետո ընկերությունն ապրանքային նշանի գրանցման գործողությունը երկարաձգելու խնդրանքով դիմել է Մտավոր սեփականության գործակալությանը, որի կողմից 10.09.2008 թվականին կատարված գրանցմամբ «Շանթ» ապրանքային նշանի գրանցման գործողությունը երկարաձգվել է մինչև 22.02.2019 թվականը, այնուհետև նշված ապրանքանիշը տրամադրվել է 3-րդ անձինք հանդիսացող ընկերությունների օգտագործմանը, առանց հայցվորի՝ որպես նշված ստեղծագործության հեղինակի համաձայնության, ուստի հայցվոր Վարշամ Ղարիբյանը գտել է, որ խախտվել են իր բացառիկ հեղինակային իրավունքները, որոնք անկախ ժամկետներից և սահմանափակումներից ենթակա են պաշտպանության դատական կարգով: Դատարանին հայտնել են, որ պատասխանող «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի կողմից «Շանթ» ապրանքային նշանի պատկերն օգտագործման է հանձնվել պատասխանող «Մավա Իմպուլս» և «Արմսվիթ» ՍՊԸ-ներին: Գտնում են, որ վերոնշյալ ընկերությունների կողմից խախտվում է հայցվորի բացառիկ հեղինակային իրավունքները, որոնք երաշխավորված են վերոնշված օրենքով, բացի այդ՝ հայցվորին պատճառվում են նյութական վնասներ: Վկայակոչելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածը՝ խնդրել են «Շանթ» ապրանքային նշանի պատկերի նկատմամբ ճանաչել Վարշամ Ղարիբյանի հեղինակության իրավունքը, վերացնել Վարշամ Ղարիբյանի հեղինակային բացառիկ իրավունքների շարունակական խախտումները պատասխանող «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի կողմից՝ վերականգնելով մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցող իրավիճակը, այն է՝ որպես հետևանք վերացնել Հայաստանի Հանրապետության արտոնագրային վարչության կողմից 12.10.1999 թվականին «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 գրանցումը և Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գործակալության կողմից պատասխանող «Շանթ Պլյուս» ապրանքային նշանի գործողության երկարաձգման գրանցումը՝ կատարված 10.09.2008 թվականին, արգելել «Շանթ Պլյուս», «Արմսվիթ» և «Մավա Իմպուլս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից «Շանթ» ապրանքային նշանի պատկերի օգտագործումը, պարտավորեցնել «Շանթ Պլյուս», «Արմսվիթ» և «Մավա Իմպուլս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին ոչնչացնել ընկերություններում պահվող «Շանթ» ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը, պարտավորեցնել «Շանթ Պլյուս», «Արմսվիթ» և «Մավա Իմպուլս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին դուրս բերել շրջանառությունից «Շանթ» ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը: Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանը /նախագահող դատավոր Ա.Մխիթարյան/ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին 10.07.2009 թվականի որոշմամբ թիվ ԵՔԴ/1127/02/08 քաղաքացիական գործը հանձնել է ՀՀ վարչական դատարանի քննությանը: ՀՀ վարչական դատարանը /նախագահող դատավոր Ռ.Հակոբյան/, քննելով վարչական գործն ըստ հայցի Վարշամ Ղարիբյանի ընդդեմ «Շանթ Պլյուս», «Մավա Իմպուլս», «Արմսվիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, երրորդ անձինք ՀՀ մտավոր սեփականության գործակալության, «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ի՝ հեղինակային իրավունքը ճանաչելու, հեղինակային իրավունքների շարունակական խախտումները վերացնելու, մինչև իրավունքի

խախտումը եղած դրությունը վերականգնելու և որպես անվավերության հետևանք ՀՀ արտոնագրային վարչության 12.10.1999 թվականի «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 և ՀՀ մտավոր սեփականության գործակալության 10.09.2008 թվականի «Շանթ» ապրանքային /սպասարկման/ նշանի գործողության երկարաձգման գրանցումները վերացնելու, պատասխանողի կողմից ապրանքային նշանը կրող պատկերի օգտագործումն արգելելու, պատասխանողին ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն և ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջների մասին, 21.10.2009 թվականին կայացրել է վճիռ և վճռել է. «Վարշամ Ղարիբյանի հայցով ընդդեմ «Շանթ Պլյուս», «Մավա Իմպուլս», «Արմսվիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, երրորդ անձինք ՀՀ մտավոր սեփականության գործակալություն, «Էլիտ Շանթ» ՍՊԸ՝ հեղինակային իրավունքը ճանաչելու, հեղինակային իրավունքների շարունակական խախտումները վերացնելու, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու և որպես անվավերության հետևանք՝ ՀՀ արտոնագրային վարչության 12.10.1999 թվականի «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 և ՀՀ մտավոր սեփականության գործակալության 10.09.2008 թվականի «Շանթ» ապրանքային /սպասարկման/ նշանի գործողության երկարաձգման գրանցումները վերացնելու, պատասխանողի կողմից ապրանքային նշանը կրող պատկերի օգտագործումն արգելելու, պատասխանողին ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն և ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջների մասին, սույն վարչական գործի վարույթը ՀՀ արտոնագրային վարչության 12.10.1999 թվականի «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 և ՀՀ մտավոր սեփականության գործակալության 10.09.2008 թվականի «Շանթ» ապրանքային /սպասարկման/ նշանի գործողության երկարաձգման գրանցումները վերացնելու պահանջի մասով, կարճել»:
ՀՀ վարչական դատարանը /նախագահող դատավոր Ռ.Հակոբյան/, հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածը, ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածը, գործն ըստ ընդդատության հանձնելու մասին 21.10.2009 թվականի որոշմամբ թիվ ԵՔԴ/1127/02/08 քաղաքացիական գործը հանձնել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարան:
Գործը դատաքննությանը նախապատրաստելու փուլում 09.09.2010 թվականին հայցվոր Վարշամ Ղարիբյանի ներկայացուցիչ Հակոբ Սաֆարյանը դիմում է ներկայացրել դատարան, որով հայտնել է, որ հայցվորը հրաժարվում է հայցից, խնդրել է կարճել թիվ ԵՔԴ/1127/02/08 քաղաքացիական գործի վարույթը:

Կիրառելի իրավունքը և վերլուծությունը.
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորը հայցից կարող է հրաժարվել առաջին ատյանի դատարանում մինչև դատաքննության ավարտը:
Նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից, իսկ 110-րդ հոդվածի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին դատարանը կայացնում է վճիռ:
Դատարանը, նկատի ունենալով, որ հայցվոր Վարշամ Ղարիբյանը հրաժարվել է իր ներկայացրած հայցից, գտնում է, որ քաղաքացիական գործի վարույթը պետք է կարճել և այդ մասին կայացնել վճիռ:

	Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-110-րդ, 130-132-րդ հոդվածներով[a] դատարանը ՎՃՌԵՑ Քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի Վարշամ Ղարիբյանի ընդդեմ «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի, «Մավա Իմպուլս» ՍՊԸ-ի, «Արմսվիթ» ՍՊԸ-ի, երրորդ անձինք ՀՀ մտավոր սեփականության գործակալության, «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ի՝ հեղինակության իրավունքը ճանաչելու, հեղինակային իրավունքների շարունակական խախտումները վերացնելու, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու, պատասխանողների կողմից ապրանքային նշանը կրող պատկերի օգտագործումն արգելելու, պատասխանողներին ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն և ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջների մասին, կարճել: Դատական ծախսերի հարցը համարել լուծված: Վճիռը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում: Օրինական ուժի մեջ մտնելուց հետո վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին: ԴԱՏԱՎՈՐ Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	27-10-2010
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	-
Ամսաթիվ:	29-11-2010
Այլ նշումներ:	
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	18-01-2011
էջերի քանակը:	214+134+98+116
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	21-01-2011
էջերի քանակը:	4 հատոր՝ 214+134+98+116
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	

Դատական Գործ N: ԵՔԴ/1127/02/08

Ամսաթիվ:	28-07-2009
վիճագրական տողի համարը:	2.1

Ամսաթիվ:	28-07-2009
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	Ռուզաննա Հակոբյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	

Որոշման ամսաթիվ:	31-07-2009

Դատաքննության ամսաթիվ:	11-09-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	31-07-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	16.00
Նիստերի դահլիճի համար:	325

Դատաքննության ամսաթիվ:	09-10-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	12-09-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համար:	325

Դատաքննության ամսաթիվ:	14-10-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	09-10-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	16:15
Նիստերի դահլիճի համար:	325

Դատաքննության ամսաթիվ:	21-10-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	14-10-2009
Այլ նշումներ:	21.10.09 //ՎԴ/4899/05/09// մասով վճռի հրապարակում, մասով կայացվել է որոշում ըստ ընդդատության ուղարկելու մասին Վարչական գործ թիվ Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 21 հոկտեմբերի 2009թ. ք.Երևան Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝ նախագահությամբ՝ դատավոր Ռ.Հակոբյանի քարտուղարությամբ՝ Ջ.Մակարյանի մասնակցությամբ՝ հայցվոր՝ Վարշամ Ղարիբյանի ներկայացուցիչներ

Ա.Մարտիրոսյանի, Հ.Սաֆարյանի
պատասխանող՝ «Շանթ Պլյուս» ՍՊԸ /ներկայացուցիչ Հ.Ալումյանի/
պատասխանողներ՝ «Մավա Իմպուլս» և «Արմսվիթ» ՍՊ ընկերություններ
/ներկայացուցիչ Բ.Վարդանյանի/
երրորդ անձ՝ ՀՀ մտավոր սեփականության գործակալություն
/ներկայացուցիչ Ա.Աբգարյանի/
երրորդ անձ՝ «Էլիտ Շանթ» ՍՊԸ /Ա.Մարտիրոսյանի/

2009թ. հոկտեմբերի 14-ին դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի Վարշամ Ղարիբյանի ընդդեմ «Շանթ Պլյուս», «Մավա Իմպուլս», «Արմսվիթ» ՍՊ ընկերությունների, երրորդ անձինք ՀՀ մտավոր սեփականության գործակալություն, «Էլիտ Շանթ» ՍՊԸ՝ հեղինակային իրավունքը ճանաչելու, հեղինակային իրավունքների շարունակական խախտումները վերացնելու, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու և որպես անվավերության հետևանք՝ ՀՀ արտոնագրային վարչության 12.10.1999թ. «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 և ՀՀ մտավոր սեփականության գործակալության 10.09.2008թ. «Շանթ» ապրանքային /սպասարկման/ նշանի գործողության երկարաձգման գրանցումները վերացնելու, պատասխանողի կողմից ապրանքային նշանը կրող պատկերի օգտագործումն արգելելու, պատասխանողին ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն և ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջների մասին,
Պ Ա Ր Զ Ե Տ
ՀՀ վարչական դատարանի վարույթում է գտնվում վարչական գործն ըստ հայցի Վարշամ Ղարիբյանի ընդդեմ «Շանթ Պլյուս», «Մավա Իմպուլս», «Արմսվիթ» ՍՊ ընկերությունների, երրորդ անձինք ՀՀ մտավոր սեփականության գործակալություն, «Էլիտ Շանթ» ՍՊԸ՝ հեղինակային իրավունքը ճանաչելու, հեղինակային իրավունքների շարունակական խախտումները վերացնելու, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու և որպես անվավերության հետևանք՝ ՀՀ արտոնագրային վարչության 12.10.1999թ. «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 և ՀՀ մտավոր սեփականության գործակալության 10.09.2008թ. «Շանթ» ապրանքային /սպասարկման/ նշանի գործողության երկարաձգման գրանցումները վերացնելու, պատասխանողի կողմից ապրանքային նշանը կրող պատկերի օգտագործումն արգելելու, պատասխանողին ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն և ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջների մասին:
14.10.2009թ. նշանակված դատական նիստի ժամանակ հայցվորի ներկայացուցիչ Ա.Մարտիրոսյանը հայտնեց, որ հրաժարվում է ՀՀ արտոնագրային վարչության 12.10.1999թ. «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 և ՀՀ մտավոր սեփականության գործակալության 10.09.2008թ. «Շանթ» ապրանքային /սպասարկման/ նշանի գործողության երկարաձգման գրանցումները վերացնելու պահանջից և ներկայացրեց նշված պահանջից հրաժարվելու և գործի վարույթն այդ մասով կարճելու մասին դիմում:
Դատարանը եզրակացրեց, որ սույն վարչական գործի վարույթը նշված պահանջի մասով ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի համաձայն՝ մինչև դատաքննության ավարտը հայցվորն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության լրիվ կամ մասնակի հրաժարվելու իր պահանջներից: Այդ դեպքում դատարանը

	կայացնում է վճիռ գործի վարույթը կարճելու մասին այն պահանջի մասով, որից հրաժարվել է հայցվորը, բացառությամբ նույն օրենսգրքի 24-րդ գլխով սահմանված գործերի: Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի՝ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից: Նկատի ունենալով, որ հայցվորը մասնակի՝ ՀՀ արտոնագրային վարչության 12.10.1999թ. «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 և ՀՀ մտավոր սեփականության գործակալության 10.09.2008թ. «Շանթ» ապրանքային /սպասարկման/ նշանի գործողության երկարաձգման գրանցումները վերացնելու պահանջի մասով հրաժարվել է հայցից մինչև դատաքննության ավարտը, դատարանը եզրակացրեց, որ սույն վարչական գործի վարույթն այդ մասով ենթակա է կարճման: Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ, 100-րդ, 112-115-րդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ կետով, դատարանը Վ Ճ Ռ Ե Ց Վարշամ Ղարիբյանի հայցով ընդդեմ «Շանթ Պլյուս», «Մավա Իմպուլս», «Արմսվիթ» ՍՊ ընկերությունների, երրորդ անձինք ՀՀ մտավոր սեփականության գործակալություն, «Էլիտ Շանթ» ՍՊԸ՝ հեղինակային իրավունքը ճանաչելու, հեղինակային իրավունքների շարունակական խախտումները վերացնելու, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու և որպես անվավերության հետևանք՝ ՀՀ արտոնագրային վարչության 12.10.1999թ. «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 և ՀՀ մտավոր սեփականության գործակալության 10.09.2008թ. «Շանթ» ապրանքային /սպասարկման/ նշանի գործողության երկարաձգման գրանցումները վերացնելու, պատասխանողի կողմից ապրանքային նշանը կրող պատկերի օգտագործումն արգելելու, պատասխանողին ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն և ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջների մասին, սույն վարչական գործի վարույթը ՀՀ արտոնագրային վարչության 12.10.1999թ. «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի անվամբ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 և ՀՀ մտավոր սեփականության գործակալության 10.09.2008թ. «Շանթ» ապրանքային /սպասարկման/ նշանի գործողության երկարաձգման գրանցումները վերացնելու պահանջի մասով կարճել: Պետական տուրքի հարցը համարել լուծված: Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ ՀՀ վճռաբեկ դատարան: ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Ռ.ՀԱԿՈԲՅԱՆ
Ժամ:	14:57
Նիստերի դահլիճի համար:	325
Որոշման ամսաթիվը:	21-10-2009
Դատարան:	Աջափնյակ և Դավթաշեն
Որոշման բովանդակությունը:	ՀՀ Վարչական դատարանը 21-10-2009թ. որոշեց

	Վարշամ Ղարիբյանի հայցով ընդդեմ «Շանթ Պլյուս», «Մավա Իմպուլս», «Արմսվիթ» ՍՊ ընկերությունների, երրորդ անձինք ՀՀ մտավոր սեփականության գործակալություն, «Էլիտ Շանթ» ՍՊԸ՝ հեղինակային իրավունքը ճանաչելու, հեղինակային իրավունքների շարունակական խախտումները վերացնելու, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու, պատասխանողի կողմից ապրանքային նշանը կրող պատկերի օգտագործումն արգելելու, պատասխանողին ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն և ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջների մասին, քաղաքացիական գործն ըստ առարկայական ընդդատության հանձնել ՀՀ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանին:
Որոշման հիմքը	
Հոդված	ՀՀ Վարչ դատ 8, ՀՀ քաղ դատ 15, ՀՀ դատ օր 22
Ուղարկման ամսաթիվը:	24-11-2009
Էջերի քանակը:	3 հատորից, 1-ին հատորը՝ 214 թերթից, 2-րդ հատորը՝ 134 թերթից և 3-րդ հատորը՝ 98 թերթից
Գործին կից նյութերը:	
Գրության համարը:	66868/09
Այլ նշումներ:	

Փաստաթուղթը տպվել է www.datalex.am պորտալի կողմից 20 Մայիս 2011